**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 04**

**23 օգոստոսի 2024 թվական**

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 03 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը և Հրայր Ասատրյանը :
Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված **Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի** «Համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 168- N որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը՝ Խոյ համայնքի 2024 թվականի օգոստոսի 26-ի ավագանու հերթական նիստում :
Նիստում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջեի եկամտային մասի՝ Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ՝ ավելացնել ՝90 254 900 ՀՀ դրամ գումար և

Ինչպես նաև թրթոխություն կատարել ֆոնդային հոդվածների միջև՝ ավելացնել համապատասխան ծախսային հոդվածին՝ սուբվենցիոն ծրագրերով շինարարական աշխատնքների վճարման համար,ինչպես նաև ընթացիկ ծախսերի համար այլ նպաստներ բյուջից հոդվածից պակասեցնել 15 200 000 ՀՀ դրամ գումար և ավելացնել համապատասխան հոդվածներին :

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի **Խոյ համայնքի ավագանու** ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

Տալ համաձայնություն կատարել լրացումներ եվ փոփոխություններ **Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի** «Համայնքի 2024 թվականի բյուջեն աստատելու մասին» N 168- N որոշման մեջ ։

ԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ